https://lurer.com/?p=278155&l=am

8 Փետրվար, 2018 20:51

https://lurer.com/?p=280229&l=am

1 Մարտ, 2018 11:28

Տպագրվել է նաև՝

http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=16501&sphrase_id=68114

14.03.2018

http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=16504&sphrase_id=68114

15.03.2018

ՀԱՅ ՁԻՆՎՈՐ (ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՍ)

#06 (1228) 14.02.2017 – 20.02. 2017

#07 (1229) 21.02.2018 - 27.02.2018

#10 (1232) 14.03.2018 - 20.03.2018

#11 (1233) 21.02.2018 - 27.02.2018

ՀԻՆ ՀԱՅՈՑ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Փետրվարի 8-ին Հայ Եկեղեցին նշում է Ս. Վարդանանց տոնը: Այն մեր պատմության ամենափառահեղ էջերից մեկն է, երբ հանուն քաղաքական ու հոգևոր ազատության, հանուն հավատի ու ազգային ինքնագիտակցության պահպանման չարի առաջ դուրս եկան բոլորը՝ զինվորը, հոգևորականը, իշխանն ու հասարակ շինականը: Իրենց պայքարով նրանք մերժեցին մի կրոն, որն ընդամենը երկու հարյուր տարի հետո պետք մերժվեր հենց նույն Պարսկաստանում՝ չդիմանալով իսլամի արշավին:

Ս. Վարդանանց տոնի առթիվ ձեզ ենք ներկայացնում «Հայոց ռազմական միտքը» թեմայի շուրջ զրույցի առաջին մասը ռազմական պատմաբան, քաղաքական գիտությունների դոկտոր Արմեն Այվազյանի հետ:

-Պարոն Այվազյան, եթե հետ գնանք, ո՞ր ժամանակվանից պիտի սկսել ուսումնասիրել հայոց ռազմական միտքը:

-Այն ժամանակվանից, երբ ստեղծվել են հայոց զինված ուժերը: Թեկուզհենց Հայկի ու Բելի ճակատամարտից: Դա կիսաառասպելական, որոշ չափով իրական փաստեր պարունակող պատմություն է, որը տարբեր պատմաբաններ տարբեր ժամանակների մեջ են դնում (իհարկե, խոսքը Ք.ա. 3-2-րդ հազարամյակների մասին է): Ասել կուզեմ՝ այն ժամանակներում, երբ ստեղծվում են զինված ուժերը, առաջանում էնրանցհրամանատարությունը, իսկ հրամանատարությունն ուղղորդում է զորքերին՝ ունենալով որոշակի ռազմական մտահղացումներ, ծրագրեր: Հենց այդ ծրագրերն էլ ռազմական միտքն են:

-Հայկը հանդես է գալիս որպես արդեն կայացած ռազմական առաջնորդ, ի՞նքն էր հիմնադիրը, թե կա՞ր դպրոց, որտեղ նա սովորել էր, որտեղ ձևավորվել, զարգացել էր ռազմական մտածողությունը:

- Թեև կա բավական համոզիչ մեկ-երկու տեսակետ, մենք մինչև այսօր հստակ չենք կարողասել, թե պատմական որ գործիչն է առավելապես մարմնավորված Հայկնահապետի կերպարում: Փաստերի սղությունը թույլ չի տալիս Հայկի և Բելի ճակատամարտի մանրամասն վերլուծություն անցկացնել՝ ուր մնաց թե խոսել դրան նախորդող ռազմական մտքի դպրոցի մասին: Պատմական տեղեկություններով ավելի հարուստ է Ուրարտուի՝ Արարատյան թագավորության, ապա նաև հայկական հաջորդ արքայական հարստությունների ժամանակաշրջանը: Ուրարտական բանակում կայինարդեն առանձին զորատեսակներ՝ հետևակ, հեծելազոր, մարտակառքեր: Սրանց գոյությունը նշանակում է, որ կար զորատեսակների համագործակցություն: Համագործակցությունը, իր հերթին, նշանակում է, որ պետք է զարգացած լիներ և՛ ռազմական միտքը, և՛ բանակը, և՛ հրամանատարական կազմը: Եթե վերցնենք թեկուզ մարտակառքը, ապա այնվարելու համար պետք էր տարիներով վարժվել, ինչպես և, օրինակ, արհեստավարժ նետաձիգ դառնալու համար էին տարիներ պահանջվում: Այն տարածված կարծիքը, թե հին Հայաստանի զորքը բաղկացած էր հիմնականում աշխարհազորից, սխալ է: Զորքի հիմնական մասը հենց պրոֆեսիոնալներն էին, ոչ թե աշխարհազորայինները: Իհարկե, կար նաև աշխարհազորային զորք. Արշակունյաց օրոք այն կոչվում էր «գուգազ», որը մտնում էր ռազմական գործողությունների մեջ անհրաժեշտ պահերին, լրացնելով հատկապես բերդապահ զորքերի քանակը: Իսկ հայոց գործող, տարաշարժուն բանակի հիմնական մասն, այնուամենայնիվ, պրոֆեսիոնալ զինվորականներն էին:

- Խոսեցիք ուրարտական ժամանակների մասին, կարո՞ղ ենք ուրարտացիներին, Հայկ նահապետին համարել լավ ստրատեգ:

- Իհարկե, կարող ենք: Նախ, որովհետև Հայկը հաղթանակ է տարել, այն էլ մե՛ծ հաղթանակ՝ դուրս գալով իր ժամանակի աշխարհակալ ամենահզոր ուժի դեմ: Ինչ վերաբերում է Ուրարտուին, ապա հիմնականում հայկական էթնիկ տարրով բնակեցված և հետագա հայկական պետական համակարգերի հետ շատ նմանություններ ունեցող այդ պետությունը նույնպես կարողացել է մոտ երեք դար դիմակայել աշխարհակալ ուժի՝ Ասորական կայսրությանը: Այս առումով բնականաբար լավ ստրատեգներ պիտի լինեին, որպեսզի չպարտվեին, կուլ չգնային, պահպանեին պետությունը:

-Խորենացին բավական հստակ ներկայացնում է, թե ինչպես է Հայկը շարում բանակը: Ի՞նչ է սա նշանակում:

- Այն մարտակարգը, որն, ըստ Խորենացու, ընտրել էր Հայկ նահապետը, զորքի շատ հետաքրքիր դասավորվածություն է, որը հետագայում օգտագործում էին, օրինակ, հռոմեացիներն ու հին գերմանացիները, բայց այն առավել մեծ կիրառում գտավ հատկապես միջնադարյան Եվրոպայում: Հայկն իր զորքն սեպաձև էր կառուցել, նպատակ ունենալով ճեղքելու թշնամու բանակի շարքերն ու կենտրոնը: Հետագայում այդ մարտակարգը եվրոպական լեզուներում ունեցավ իր հատուկ տերմինները, օրինակ, հին ռուսերենում կոչվեց «свинья»: Այնպես որ Խորենացու տեղեկությունը

պարունակում է ռազմական եղելություն: Կիսալեգենդար այդ ճակատամարտն ունի իրական պատմական հիմք:

- Հայոց ռազմական միտքն ունի՞ կարմիր թել, թե յուրաքանչյուր ժամանակաշրջանում յուրովի ենք ներկայացել:

- Ամեն ինչ պետք է միշտ դիտել տվյալ ժամանակի մեջ, տվյալ դարաշրջանում, տվյալ տասնամյակում՝ թշնամիների ուժերը հաշվի առնելով: Եթե վերցնենք, օրինակ, հին և միջնադարյան շրջանը՝ Արտաշեսյանների, Արշակունիների, Բագրատունիների թագավորությունը, Զաքարյանների իշխանությունը, ապա այո՛, եղել է կարմիր թել, այն էլ ոչ թե մեկ, այլ՝ մի քանի: Բանն այն է, որ հայերը մի քանի հազարամյակ շարունակ անընդմեջ ունեցել են հզոր զինված ուժեր, և այդ ահռելի փորձը հենց այնպես չէր կարող անհետանալ, հատկապես՝ պետականության օրոք: Եվ նույնիսկ այն ժամանակահատվածներում, երբ անկախ պետությունը բացակայել է, օրինակ՝ 428թ.-ից ի վեր, երբ Արշակունիների արքայատոհմը վերացվեց, ընդհուպ մինչև հայոց թագավորության վերածնունդը Բագրատունյաց հարստության ներքո, ապա հայկական զորքը դարձյալ չի դադարել ակտիվորեն հանդես գալ այս տարածաշրջանում՝ պահպանելով Հայաստանում իր կազմակերպական կառուցվածքը և այն ավանդույթները, որոնք ուներ հայոց պետականության շրջանում: Արշակունյաց թագավորության անկումից հետո սպարապետության գործակալությունը չվերացավ, զորքերի կենտրոնացված հրամանատարությունը գտնվում էր Հայոց սպարապետի ձեռքում: Ընդ որում, եթե Պարսկական Հայաստանում, որը նախկին Մեծ Հայքի թագավորության մոտավորապես չորս հինգերորդ մասն էր, սպարապետությունը միշտ մնաց, Հայաստանի բյուզանդական մասում այն գոյատևեց մինչև 538-539 թվականներին: Այսինքն, այստեղ էլ 100 տարուց ավել պահպանվեց: Ու թեև Բյուզանդիայում հայոց սպարապետությունը վերացվեց, հայկական զորամասերը շարունակում էին գործել բյուզանդական բանակի կազմում, շատ հաճախ ավտոնոմ՝ դաշնակցի կարգավիճակով: Պատահական չէ, որ Բյուզանդիայում կային տասնյակ ու հարյուրավոր հայ հրամանատարներ և հայկական առանձին զորագնդեր: Պրոկոպիոս Կեսարացին միայն 6-րդ դարում հիշատակում է առնվազն 17 հայ բարձրաստիճան հրամանատար, որոնցից ոմանք տարբեր պահերի ստանձնել են նաև գլխավոր հրամանատարի պաշտոնը: Օրինակ՝ մեծն Նարսեսը, ով 552 թ. Տագինայի հայտնի ճակատամարտում ջախջախելով Տոտիլայի գլխավորած օստ-գոթերի զորքը՝ կարողացավ Բյուզանդիայի համար վերագրավել Իտալիան:

Այն փաստը, որ բյուզանդական, ինչպես նաև պարսից բանակի շատ հրամանատարներ, այդ թվում՝ գլխավոր հրամանատարներ եղել են հայեր, նրանցից շատերը ծնվել, մեծացել էին Հայաստանում, իրենց ռազմական կրթությունը ստացել էին Հայաստանում, հետագայում նոր ծառայել բյուզանդական ու պարսկական բանակներում՝ այս ամենը նշանակում է, որ հայկական ռազմարվեստը չափազանց զարգացած էր, ինչը չէր կարող աննկատ մնալ այն ժամանակվա հզոր տերությունների համար:

Ինչ վերաբերում է հայոց ռազմական արվեստի առանձնահատկություններին, դրանք շատ էին: Հայկական բանակի հարվածային ուժը հեծելազորն էր: Այդպես չէր, օրինակ՝ հին Հռոմում: Հեծելազորն ավելի բարդ (և ավելի ծախսատար) զորատեսակ է, քան հետևակը: Այն, որ հայոց հեծելազորը, հայոց այրուձին մեծ վարկ ուներ հին աշխարհում, նույնպես ցույց է տալիս, թե որքան ինստիտուցիոնալիզացված էր հայկական բանակը: Եղել են նույնիսկ տեսակետներ, թե հայկական բանակն առհասարակ միայն այրուձիից է բաղկացած եղել, սակայն դա այդպես չէ: Այդ կարծիքի հեղինակը Նիկողայոս Ադոնցն էր, նրանից հետո էլ՝ Կիրիլ Թումանովը: Ինչպես ես ցույց եմ տվել իմ վերջին աշխատության մեջ, դա բացարձակապես սխալ տեսակետ է: Իհարկե՝ հարվածային ուժը հեծելազորն էր, այդ հեծելազորի մեջ առավել մարտունակ, առավել հզոր ուժն էլ զրահապատ

ձիավորներն էին՝ կատաֆրակտները, որոնց թիվը, իմ աշխատության մեջ էլ նշել եմ, տոկոսային հարաբերակցությամբ շատ բարձր էր: Երեքից մեկը զրահապատ ձիավոր էր: Այդպես չէր ոչ Հռոմում, ոչ էլ նույնիսկ Պարթևստանում ու Սասանյան Իրանում, որտեղ կատաֆրակտները կազմում էին հեծելազորի առավելագույնը մեկ տասներորդ մասը: Խոսքս վերաբերում է Տիգրան Մեծի ժամանակներից՝ Ք. ա. 1-ին դարից մինչև 5-6-րդ դարեր ընկած ժամանակահատվածին: Ավելի ուշ շրջանի տվյալները պահանջում են առանձին քննություն: Բայց գոնե հիմա կարող ենք ասել, որ Ք.ա. 1-ին դարից մինչև Ք.հ. 6-րդ դար հայկական այրուձին սարսափելի մեծ ուժ էր ներկայացնում, և հենց դրանից էլ վախենում էին ու նաև փորձում էին օգտվել ժամանակի գերտերությունները՝ Սասանյան Իրանը, դրանից առաջ՝ Պարթևստանը՝ արևելքում, Հռոմեական կայսրությունն ու նրան հաջորդած Արևելահռոմեական կայսրությունը՝ արևմուտքում:

Առանձնահատկությունների թվում կարելի է ընդգրկել նաև լեռնային պատերազմ վարելու հմտությունը, հատուկ մշակված ռազմավարությունները՝ Հայաստանի պաշտպանության կազմակերպման գործում: Գիտեք՝ Հայաստանը միշտ ստիպված էր պահել խոշոր զորամիավորումներ իր հյուսիսային և հյուսիս-արևմտյան հատվածներում, որովհետև Կովկասյան լեռնանցքներից հաճախակի էին լինում տարբեր տեսակի հրոսակային բանակների անցումները: Հարավում, արևելքում և արևմուտքում է՛լ ավելի վտանգավոր էր՝ այնտեղ էին իրանական (պարթևական և Սասանյան) ու հռոմեական կայսերական բանակները: Առնչվելով այդ տարբեր ռազմական մշակույթների հետ՝ մեր բանակը նաև վերցնում էր նրանցից լավագույն գծերը: Օրինակ՝ պատահական չէ, որ իրանական, սասանյան հեծելազորի ռազմավարությունը բավական նման էր հայկականին, բայց հետևակային մարտեր վարելու գործում հայերը յուրացրել էին հռոմեական բանակի փորձը: Իսկ հռոմեական հետևակը, ինչպես գիտենք, ամենաուժեղն էր և արդյունավետը: Այն, որ հայերը վերցրել էին հռոմեացիների փորձը, հստակ է: Լուկուլլոսի արշավանքի ժամանակ (Ք. ա. 69-68 թթ.) հայկական բանակում հենց պատերազմի ընթացքում (որ խիստ անսովոր ու բարդ գործ է) իրականացվեց մի խոշոր բարեփոխում՝ հետևակի ռազմական ռեֆորմ: Հեծելազորն իմաստ չուներ բարեփոխել, քանի որ այդ ժամանակվա հայկական (ինչպես և պարթևական) հեծելազորն ավելի լավն էր, քան հռոմեականը, ու ավելի մեծաքանակ էր: Հետևակի այդ ռեֆորմը հենց այնպես չէր կարող անհետանալ: Չորս դար անց՝ 371 թ. Ձիրավի ճակատամարտում մենք տեսնում ենք, թե ինչպես են հայկական հետևակայինները ճիշտ նույն կերպ մաններում՝ հրաշալի համագործակցելով հռոմեական զորամասերի հետ, ինչը շատ բարդ խնդիր էր: Սա նշանակում է, որ հայկական բանակը հռոմեական հետևակի մոդելն ու ավանդույթները վաղուց ի վեր յուրացրած լինելով՝ շարունակում էր հետևել ու համընթաց քայլել հռոմեացիների հետ, այդ թվում՝ համատեղ զորավարժություններ անցկացնելու միջոցով:

- Իսկ ի՞նչ խնդիրներ էր լուծում այդ բարեփոխումը:

- Տարբեր՝ մարտակարգերի դասավորվածություններն էին, մարտավարական հնարքներն էին, զանազան զորաշարժերն էին: Օրինակ, Ձիրավի ճակատամարտում հայկական և հռոմեական վահանակիր հետևակայինները միասին շատ հմտորեն էին տարաշարժվում՝ մասնավորապես, առանց մարտական դասավորվածությունը խախտելու բացում էին իրենց շարքերը և թույլ տալիս գրոհից վերադարձող հեծելազորայիններին իրենց միջով թիկունք անցնել: Բանն այն է, որ հաճախ էր պատահում, երբ հեծելազորայինը հարվածից հետո կորցնում էր նիզակը, ետ էր գալիս, նոր նիզակ էր վերցնում ու նորից նետվում գրոհի: Այս զորաշարժերը շատ գեղեցիկ են նկարագրված Փավստոս Բուզանդի պատմության մեջ: Հին հայոց բանակը պարբերաբար մեծ ռազմական բարեփոխումների էր ենթարկվում: Ի դեպ, այսօր էլ կարելի է լագագույն ժամանակակից բանակներից փոխառել կարևոր, օգտակար տարրեր այս կամ այն հարցում:

- Ունեցե՞լ ենք ռազմական կոդեքս:

- Մոտ 20 տարի առաջ եմ մի ուսումնասիրություն հրապարակել՝ «Հայ զինվորականության պատվո վարքականոնը 4-5-րդ դարերում»: Այդ մասին տեղեկություններ կան արդեն մեր 5-րդ դարի աղբյուրներում, բայց շատ հավանական է, որ վարքականոնը գործել է ավելի վաղ շրջանում ևս: Ամեն դեպքում, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Եղիշեի երկերից արդեն իսկ այդ վարքականոնի դրույթները շատ հստակ, պարզ երևում են: Ես կառանձնացնեմ 8 հիմնական դրույթ, թեև կան շատ այլ կետեր էլ: Այդ դրույթների մի մասը նմանություններ ունի հետագա դարերում ի հայտ եկած եվրոպացի ասպետների և ճապոնացի սամուրայների՝ առավել հետազոտված վարքականոնների հետ: Հայ զինվորականի պրոֆեսիոնալ արժեհամակարգի յուրահատկությունը թերևս այն էր, որ նրա համար իր կարևորությամբ առաջին տեղում հայոց պետությունն էր՝ թագավորությունը, և ոչ թե իր ֆեոդալական գերական՝ սյուզերենը: Մյուս կետերի մեջ էին հայոց թագավորի, ժողովրդի, եկեղեցու ու եկեղեցականների, վանքերի պաշտպանությունը, այդ արժեքներին հավատարիմ լինելը և անհրաժեշտության դեպքում հանուն դրանց զոհաբերվելը: Հենց այդպես էլ ասված է, որ կյանքը պետք է զոհել այս, այս, այս արժեքների՝ պետության, թագավորի (որպես այդ պետության ամենակարևոր ինստիտուտի ու խորհրդանիշի), սրբավայրերի, եկեղեցու, ավանդույթների, ընտանիքի, զինակիցների համար: Այս ամենը շատ հետաքրքիր, միահյուսված ձևով ներկայացված է հատկապես Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ, երբ նկարագրվում է սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը՝ իր արժանիքներով հանդերձ: Այս վարքականոնի առկայությունը ևս վկայում է ինչպես հայկական պետության խորը ավանդույթների, այնպես էլ հայոց բանակի ուրույն գաղափարախոսության մասին: Այդ գաղափարախոսությունը չէր կարող առաջանալ մի քանի տասնամյակի ընթացքում: Սրանք արդեն մշակված, գրավոր տեսք ստացած հիմնադրույթներ էին: Ի դեպ, այսօր էլ շատ ժամանակակից բանակներ ու նրանց առանձին զորամասերը ունեն իրենց պատվո վարքականոնները:

- Այն ժամանակներում, երբ չունեինք թագավոր, պետություն, այդ վարքականոնը ձևափոխվո՞ւմ էր:

- Կարծում եմ, որ մանր ձևափոխումներ պետք է լինեին, բայց հիմնականը նույնն էր մնում: Մինչև հայոց թագավորության անկումը՝ 428թ., պետք է նույնը լիներ: Հայոց թագավորություն, հայոց աշխարհ, հայոց երկիր և այսպիսի մի քանի հոմանիշային բառեր են օգտագործվում: Թագավորության վերանալուց հետո, բնականաբար, այդ կետը դուրս էր գալիս, ինչպես և թագավորի մասին կետը: Բայց այդ կետը մնում էր հիշողության մեջ, հարմար առիթ առաջանալու դեպքում հայեր միշտ ձգտում էին վերականգնել իրենց կորցրած ազգային թագավորությունը: 449-451թթ. Վարդանանց պատերազմի գլխավոր նպատակը հենց թագավորության վերականգնումն էր: Սխալ է այն տարածում գտած տեսակետը, թե իբր այդ պատերազմը մղվում էր միայն հավատի համար: Այն մղվել է և՛ քաղաքական, և՛ հոգևոր ազատության համար՝ «վասն հայրենյաց, վասն հավատի»:

Իհարկե, այս պատերազմում հայերը չեն պարտվել, իսկ Ավարայրի ճակատամարտն ավարտվել է ոչ ոքի: Այդպիսի ելքով ճակատամարտեր համաշխարհային պատմության մեջ շատ են եղել: Սակայն եթե հայերը հաղթանակ տանեին Ավարայրի ճակատամարտում, հայոց թագավորությունը վերականգնվելու էր, գլխին կանգնելու էր Վարդան Մամիկոնյանը՝ որպես նոր հարստության, դինաստիայի սկզբնադիր: Այդ պատերազմը մանրամասն ու բացառիկ հավաստիությամբ ներկայացրած Եղիշեի երկում, ի դեպ, պարզորեն երևակվում են հայ զինվորականության պատվո վարքականոնի ավանդական դրույթները:

-Ի՞նչ առանձնահատկություններ ուներ Ավարայրի ճակատամարտը և ի՞նչ ազդեցություն ունեցավ այն պատմության մեջ:

- Իմ վերջին, ռուսերենով գրված գիրքը նվիրված է ոչ միայն Ավարայրի ճակատամարտին, ամբողջ պատերազմի քննությանը, թեև կենտրոնական հատվածն, իհարկե, Ավարայրի մասին է: Որպեսզի հասկանանք այդ ճակատամարտի ընթացքը, հակառակորդ բանակների թվաքանակը, մարտակարգերը և այլևայլ մանրամասնությունները, պետքէքննելամբողջպատերազմը՝ նախորդող և հաջորդող բախումները, ճակատամարտերը, ամրոցների գրավումներն ու ապարդյուն պաշարումները: Ստիպված եմ եղել քննել հայոց ռազմական պատմությունից բազմաթիվ այլ կարևոր դրվագներ՝ հատկապես 4-րդ դարից, սակայն երբեմն իջնելով նույնիսկ մինչև Ք. ա. 6-րդ ու 1-ին դար, երբեմն՝ ժամանակագրորեն բարձրանալով մի քիչ վերև, որպեսզի հնարավոր լիներ համեմատել ու գտնել այն ընդհանրությունները, հատվող գծերը, որոնք կապում են Հայաստանի պատմականորեն ձևավորված բանակային կազմակերպությունն ու նրա պաշտպանական հայեցակարգը: Օրինակ, Վարդան Մամիկոնյանի զորքերում հիշատակվում են այսպես կոչված ոստանիկական և մարդպետական զորամասեր: Ի՞նչ էին դրանք իրենցից ներկայացնում: Քննել եմ դրանց առաջացումն ու զարգացումը՝ ցույց տալով, որ դրանք երկար՝ մոտ մեկ հազարամյակի պատմություն ունեցող արքայական զորքեր էին: Դրանք, ըստ երևույթին, ձևավորվել էին դեռևս Տիգրան Երվանդյանի ժամանակ, և հետագայում, ինչպես Խորենացին է հիշատակում, ինչ-որ պահի և ինչ-որ պատճառով ենթարկվել էին ամբողջական վերափոխության: Սակայն եթե նույնիսկ փոփոխություններ լինեին հրամանատարական կազմում, որոշ զորամասեր հանեին, նորերը բերեին մտցնեին արքայական բանակի մեջ, միևնույն է հին ավանդույթները պահպանվելու էին: Վերցնենք թեկուզ Կարմիր բանակը. այն շատ ավանդույթներ պահպանեց ռուսական ցարական բանակից, ինչպես և, օրինակ, ներկայիս հայկական բանակը՝ նախկին Խորհրդային բանակից: Եվ ահա այդ ոստանիկական, մարդպետական զորագնդերը, որոնք ամբողջությամբ հեծելազորից էին բաղկացած, հասել էին մինչև 449 թվական ու Վարդանանց պատերազմին իրենց գործուն մասնակցությունը բերել: Դրանք հայոց բանակի ամենաընտիր, այսօրվա տերմինով ասած՝ էլիտար զորամասերն էին:

-Ի՞նչ ռազմավարություն էին ընտրել հայերը Ավարայրի ճակատամարտի համար:

-Գալով Ավարայրի ճակատամարտին ՝այստեղ իհարկե քարտեզ է պետք՝ ցույց տալու համար հակառակորդ կողմերի մարտակարգերն ու զորաշարժերը: Սա երկար դասախոսության թեմա է, սակայն փորձեմ շատ հակիրճ ներկայացնել: Վարդան Մամիկոնյանիու նրա զինակիցների՝ հայ հրամանատարական կազմի նպատակը հետևյալն էր. ուժեղ գրոհով կոտրել պարսկական բանակի թևերից մեկը, շպրտել այն կենտրոնի ու մյուս թևի վրա, այդպիսով խախտել պարսիկների ամբողջ մարտական դասավորությունը և ջախջախել նրանց: Սա «մաքսիմում ծրագիրն» էր: Սակայն եթե այդ ծրագիրը չիրականանար, կար նաև պահեստային՝ «մինիմում ծրագիր»՝ նահանջել Հայաստանի խորքերը և այնտեղ կազմակերպված դիմադրություն ծավալել: Այս երկրորդը շատ բարդ ռազմավարություն էր, որը հայերը հաճախ են կիրառել 4-րդ դարի ընթացքում՝ պարսիկների դեմ բազմաթիվ, տևական պատերազմներում: Այդպիսի ռազմավարություն կիրառել են ռուսները Նապոլեոնի ներխուժման ժամանակ:

Այդպիսի ռազմավարություն, թեև չէր նախատեսվել, բայց կիրառվեց գերմանացիների դեմ Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ: Բայց Նապոլեոնի դեմ այն մտածված կիրառվեց. նահանջ դեպի երկրի խորքը, այնտեղ՝ հարձակում ու զավթչի դուրս մղում երկրի տարածքից: Հայերը ցույց են տվել, որ այսպիսի ռազմավարություն կարող են կիրառել և դա արել են բազմիցս: Այդ ռազմավարությունը, սակայն, լուրջ վտանգներ էր պարունակում, քանի որ այդ դեպքում ավերվում էին ամբողջ շրջաններ, ժողովուրդը զանգվածաբար ոչնչացվում էր, ենթարկվում էր բռնագաղթի, ինչպես Շապուհ Երկրորդը 360-ական թթ. Հայաստանից ավելի քան մեկ միլիոն մարդու բռնագաղթի ենթարկեց: Ուստի այդ ռազմավարությանը դիմում էին ամենավերջում, երբ հնարավոր չէր լինում կանգնեցել զավթիչ բանակը երկրի սահմանների մոտ: Բայց երբ

պարսիկներն, այնուամենայնիվ, կարողանում էին թափանցել երկրի խորքերը, հայերը նահանջում էին՝ պահպանելով իրենց բանակը, հատկապես՝ հեծելազորը, մարտական բարձր պատրաստվածության մեջ: Հայկական ամրոցների ուժասպառ անող պաշարումներից և հյուծիչ բախումներից հետո, երբ հայկական տարաշարժուն (մոբիլ) ուժերն անընդհատ սպառնում էին ու կտրատում պարսիկների հաղորդակցման ուղիները, թշնամին դիմում էր նահանջի: Կամ այդ պահին, հաճախ էլ՝ երբ պարսից բանակը պատսպարված էր լինում իր դաշտային ճամբարում, հայոց հեծելազորը հանկարծակի անցնում էր վճռական հակահարձակման, որն էլ, որպես կանոն, ավարտվում էր պարսկական բանակի ջախջախմամբ: Այդպես բազմիցս է եղել, ինչպես, օրինակ՝ Աղձքի մոտ տեղի ունեցած հայտնի ճակատամարտում: Հայերը թույլ էին տվել պարսիկների նմտնել երկրի ներքին գավառները ու հարձակում են գործել միայն նրանց Դարանաղյաց Անիից նահանջելիս՝ լիակատար հաղթանակ տանելով:

Պարսիկների գերեվարած հազարավոր մարդիկ ազատվել են, թալանվածը հետ է խլվել, ներառյալ հայ արքաների ոսկորները, որոնք վերաթաղվել են Աղձքում: Վերադառնալով Ավարայրին՝ ասեմ, որ հայոց հրամանատարության «մինիմում ծրագիրը» նշված ռազմավարությունն էր՝ երկրի խորք նահանջելը, եթե, իհարկե, չհաջողվեր ջախջախել պարսկական բանակը գլխավոր ճակատամարտում: Ճակատամարտի սկզբում հայկական ձախ թևը, և ապա նրանց միացած Վարդան Մամիկոնյանի ընտիր պահեստային զորախումբը հարվածում են պարսկական բանակի աջ թևին: Ջախջախում են աջ թևի առաջին գիծը, որն ավանդաբար կազմված էր հեծելազորից, հարձակվում են երկրորդ գծի վրա, որտեղ ծանր հետևակազորն էր, որի առջև կանգնած էին փղերը: Այդ փղերն կատարում էին հրամանատարական կետերի դեր՝ նրանց վրա նստած էին հետևակային զնդերի հրամանատարները: Բացի այդ մի քանի մարտական կենդանիներից, պարսիկներն ունեին փղազորից բաղկացած պահեստային մի հզոր զորախումբ՝ Արտաշիր զորավարի գլխավորությամբ: Իմ հաշվարկներով, պարսկական բանակում եղել է, ընդհանուր առմամբ, մոտ 40 փիղ, որոնցից 15-16-ը նրանց երկրորդ գծի առջևում, իսկ մյուսները՝ ռեզերվային զորախմբի մեջ՝ թիկունքում: Պարսկական զորքի աջ թևում կանգնած մոտ 5 փղերից մի քանիսը կամ գուցե բոլորը ոչնչացվելեն Վարդան Մամիկոնյանի գլխավորած կատաղի գրոհի ժամանակ: Բնականաբար,ոչնչացվել են նաև նրանց վրագտնվող պարսից հրամանատարները:

-Ավարայրում կողմերից ոչ մեկը փաստացի չհաղթեց, սակայն մենք կարողացանք պահել մեր կրոնը: Մի քանի հարյուրամյակների միջով եթե վերլուծենք իրավիճակը, ի՞նչ եք կարծում՝ կարո՞ղ էինք հաղթել այդ ճակատամարտում:

- Ավարայրի ճակատամարտը կարող էր հաղթական ելք ունենալ, եթե պարսից բանակի գլխավոր հրամանատար Մուշկան Նիսալավուրտն ուժասպառ եղող պարսից աջ թևին վերջին պահին օգնության չհասցներ իր զորքի կենտրոնի ուժերը՝ նրանց նահանջն իրականացնելու միջոցով: Եթե այդ զորաշարժը չլիներ, հայերը ջախջախիչ հաղթանակ կտանեին, ինչպես եղել էր դրանից մեկ տարի առաջ՝ Խաղխաղի ճակատամարտում՝ նույն մարտավարական հնարքը կիրառելու շնորհիվ: Շուտ հասկանալով, որ այս անգամ իր մտահղացումը չտվեց ակնկալվող արդյունքը, ու նաև հաշվի առնելով այն, որ պարսկական բանակը շատ մեծ էր ու հզոր ռեզերվներ ուներ, ինչպես նաև այն, որ այդ բանակը գլխավորում էր հմուտ ու փորձառու մի զորավար՝ Մուշկան Նիսալավուրտը, Վարդան Մամիկոնյանն ընդունեց միակ ճիշտ որոշումը՝ հրամայեց հայոց զորքերին դիմել ընդհանուր, կազմակերպված նահանջի՝ կիրառելով նախապես մշակված «մինիմում ծրագիրը»: Այդ նահանջն ապահովելով և իր զորագնդի վրա բևեռելով պարսից աջ թևի, կենտրոնի ու պահեստային զորախմբերի ողջ ուշադրությունը, հայոց սպարապետը մնաց ճակատամարտի գլխավոր օջախում՝ հայոց ձախ թևում, և այնտեղ էլ ընկավ քաջի մահով: Օգտվելով Վարդան Մամիկոնյանի շահած ժամանակից՝ հայկական բանակի գլխավոր ուժերն ապահով նահանջեցին դեպի երկրի խորքը՝ տալով երեք անգամ պակաս զոհ, քան պարսիկները:

Այդ նահանջը կրել է խիստ կանոնավոր բնույթ, այլապես հայոց զոհերը տասնապատիկ ու քսանապատիկ կլինեին: Ընդհանրապես, մարտի ընթացքում նահանջը բարդագույն մանևր է, այն վատ կազմակերպելու դեպքում հետևանքները կործանարար են լինում: Հայոց բանակը փայլուն իրականացրեց նահանջի զորաշարժը. թողնելով բավարար չափով վերջապահ ուժեր՝ հայերը բաժանվեցին չորս հիմնական զորախմբերի և նահանջեցին չորս գլխավոր ուղղություններով՝ ամրանալով Հայաստանի կենտրոնում՝ Միջնաշխարհում, հարավ-արևմուտքում՝ Տմորիքում, հյուսիս-արևմուտքում՝ Տայքում և արևելքում՝ Արցախում՝ այդպիսով ստեղծելով դիմադրության հզոր յուրօրինակ աղեղ: Թեև Ավարայրի ճակատամարտն ավարտվեց տակտիկական ոչ ոքիով, ժամանակի ընթացքում այն վերածվեց հայոց լիիրավ ռազմավարական հաղթանակի: Այդ մեծ ճակատամարտի պատմական նշանակությունը, փաստորեն, շարունակապես աճեց հայոց համար, հատկապես հաջորդ՝ 482-484 թթ. հայ-պարսկական պատերազմի հաջող ավարտով ու Նվարսակի դաշնագրի կնքմամբ, որը Մարզպանական Հայաստանին շնորհեց լայն ինքնավարություն ներքին քաղաքական, ռազմական, կրոնական-մշակութային և իրավական ոլորտներում:

Схема 4. Аварайрская битва:
решающие бои и отступление Армянской Армии
Тагуп Вонанцеан
Нерсакуп Арцруни
Вардан Мамиконян
Мушеган Мамиконян
Артавазд
Вардан Сюни
Чорс
① Персидский центр отходит и занимает оборону против армянского левого фланга.
② Армянские войска отступают.
③ Отряд Вардана Мамиконяна ведет арьергардный бой.
④ Отряд катафрактов Вагана Арцруни прорывается к Вардану Мамиконяну.
⑤ Персидские резервы атакуют и окружают Вардана Мамиконяна.



ՀԻՆ ՀԱՅՈՑ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՏՔԸ ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Այսօր ձեր դատին ենք հանձնում ռազմական պատմաբան, քաղաքական գիտությունների դոկտոր Արմեն Այվազյանի հետ «Հին հայոց ռազմական միտքը Հայկ նահապետից մինչև Վարդան Մամիկոնյան» զրույցի երկրորդ մասը:

— Պարոն Այվազյան, դուք նշեցիք, որ Ավարայրի ճակատամարտը մարտավարական ոչ-ոքի էր, որը հայերի համար ժամանակի ընթացքում վերածվեց ռազմավարական հաղթանակի: Իսկ մեզանում Ավարայրի ճակատամարտը շատ հաճախ գնահատում են որպես ընդամենը «բարոյական հաղթանակ»...

— Այո, այդ կաղապարային գեղարվեստական գնահատականը մեզանում ամենատարածվածն է: Նախապես այն դրական իմաստ է ունեցել՝ ընդգծել է այդ մեծ ճակատամարտի բարերար ազդեցությունը հայոց հետագա ամբողջ պատմության վրա: Բայց վերջերս «բարոյական հաղթանակ» բնորոշումն անարդարացիորեն ձեռք է բերել առավելապես բացասական, նույնիսկ հեգնական երանգավորում, ըստ որի՝ Ավարայրում հայերն իբր միայն բարոյապես են հաղթել, իսկ ռազմական առումով պարտություն են կրել: Սա պատմական փաստերին ու ռազմական գիտությանը հակասող տեսակետ է:

Ռազմական տեսության գերմանացի դասականի՝ Կարլ ֆոն Կլաուզեվիցի սահմանումով, հաղթանակի համապարփակ հասկացությունը ներառում է երեք հիմնական տարր. 1) հակառակորդի ֆիզիկական ուժերի մեծ կորուստները, 2) նրա բարոյական ուժերի նույնպիսի կորուստները, 3) այդ մասին պարտվածի բացահայտ խոստովանությունը, որով նա հրաժարվում է իր պատերազմում ունեցած նախնական մտադրությունից: Ավարայրում այս նպատակներից և ոչ մեկին պարսիկները չհասան: Ընդհակառակը՝ ճակատամարտում նրանք հայերից երեք անգամ ավել սպանված տվեցին (այդ թվում՝ ինքը բարձրաստիճան զորահրամանատար): Փոխարենը՝ իհարկե, ռազմի դաշտում զոհվեց հայոց գլխավոր հրամանատարը (ինչպես նաև 10 հայ բարձրաստիճան զորահրամանատար): Բայց ամենակարևորն այն էր, որ Մուշկան Նիսալավուրտը չկարողացավ ջախջախել Հայոց բանակը, որն, ինչպես արդեն ասացի, բաժանվելով չորս մասի, խույս տվեց հետապնդումից և կազմակերպեց դիմադրության հաջորդ փուլը: Պատերազմը շարունակվեց ևս կես տարի՝ ավարտվելով ոչ միայն Մարզպանական Հայաստանի ինքնավարությունը վերացնելու և հայերին ձուլելու *իրենց նախնական մտադրություններից պարսիկների հրաժարումով*, այլև հայերին արված ևս մեկ չափազանց նշանակալից մի զիջումով, որը մեր պատմագիտության մեջ իսպառ աչքաթող է արվել:

Բանն այն է, որ 449 թվականին, երբ սկսվեց հայոց ապստամբությունը, Մարզպանական Հայաստանի 16 կարևոր ամրոցներում տեղակայված էին պարսկական կայազորներ, որոնք Վարդան Մամիկոնյանն ու իր զինակիցները հատ-հատ ոչնչացրեցին հենց ամենասկզբում՝ անթերի ու միաժամանակ իրականացնելով 16 կայծակնային հատուկ գործողություն: Իսկ ահա 482 թվականին, երբ սկսվեց Սասանյանների դեմ հաջորդ ապստամբությունը՝ Վարդան Մամիկոնյանի զարմիկ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ, Մարզպանական Հայաստանում գեթ մեկ պարսկական կայազոր գոյություն չուներ: Սա նշանակում է, որ 451 թվականի վերջին Վարդանանց ուխտին հավատարիմ մնացած հայ նախարարները՝ ինքնակամ ներկայանալով ու հանձնվելով պարսից իշխանությանը, դիմել էին այդ քայլին միայն այն բանից հետո, երբ ամուր երաշխիքներ էին ստացել առ այն, որ հայոց հողի վրա պարսկական զորքեր չեն տեղակայվելու: Հետևաբար, Ավարայրում և առհասարակ 449-451 թթ. հայ-պարսկական պատերազում հայոց պարտության մասին դատողությունները սխալ են ու բացարձակապես ավելորդ:

Նմանատիպ ոչ-ոքիներով են ավարտվել շատ ուրիշ ճակատամարտեր։ Օրինակ, ռուսների և ֆրանսիացիների միջև 1812 թվականին տեղի ունեցած Բորոդինոյի ճակատամարտը, որը նույնպես կարճ ժամանակահատվածում վերածվեց ռուսական կողմի ռազմավարական հաղթանակի։ Ընդ որում, ճակատամարտից անմիջապես հետո ռուս հրամանատարության մեջ ոմանք Բորոդինոն պարտություն էին համարում՝ հիմք ընդունելով այն փաստը, որ ռուսական բանակը նահանջեց ու Նապոլեոնին հանձնեց մայրաքաղաք Մոսկվան։ Մինչդեռ գլխավոր հրամանատար Միխայիլ Կուտուզովն ամենասկզբից էլ համոզված հայտարարում էր, որ Բորոդինոն հաղթանակ է, քանի որ ռուսական բանակը ոչ միայն չէր ջախջախվել, այլև ֆրանսիացիներին մեծ կորուստներ պատճառելուց հետո կանոնավոր կերպով նահանջել էր ու անցել դիմադրության հաջորդ փուլին։

Եղիշեն Ավարայրի ճակատամարտին տվել է ճշգրիտ գնահատական. «Ոչ թե մեկ կողմը հաղթեց, և մյուս կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին»։ Եղիշեի այս ամփոփումը նմանվում է Նապոլեոնի՝ Բորոդինոյի ճակատամարտին հետագայում տված գնահատականին. «Իմ բոլոր ճակատամարտերից ամենաահավորն այն էր, որ ես տվել եմ Մոսկվայի մատույցներում։ Ֆրանսիացիներն իրենց արժանի ցույց տվեցին՝ հաղթանակ տանելու, իսկ ռուսները նվաճեցին անպարտելի լինելու իրավունքը»։ Եղիշեի և Նապոլեոնի այս հատու բանաձևումներում, իրականում, արտացոլված են այդ բախտորոշ ճակատամարտերի ռազմաքաղաքական ընդհանուր արդյունքները։

— Իսկ ի՞նչ ուրիշ խոշոր բախումներ են եղել 449-451 թվականներին հայկական և պարսկական ուժերի միջև։

— Արդեն հիշատակեցի ապստամբության սկզբում պարսկական 16 կայազորների չեզոքացումը։ Այդ առանձին-առանձին իրականացված 16 հաջող գործողություններին նախորդել էր մեկ ուրիշ խոշոր գործողություն. իր իսկ դաշտային ճամբարում ջախջախվել էր սասանյան խոշոր (ըստ իմ վերլուծության արդյունքների՝ 10,000-անոց) հեծյալ այն զորամիավորումը, որն ուղարկվել էր Հայաստան՝ բնակչությանը հավատափոխ անելու գործընթացը բռնի ուժով առաջ տանելու նպատակով։ Ընդ որում, հարձակումը պարսկական ճամբարի վրա իրականացվել էր այդ ժամանակվա ռազմական տեսության (բյուզանդական տրակտատներից մեզ հայտնի) բոլոր կանոնների համաձայն։ Հայոց զորքերը լուսաբացին, երեք կողմից շրջապատել են պարսից ճամբարը, չփակելով, սակայն, չորրորդ՝ հարավային կողմը, որպեսզի պարսիկներն ունենան նահանջի ճանապարհ ու դիմեն փախուստի՝ առանց կատաղի դիմադրություն ցույց տալու։ Այդ ժամանակներում, ինչպես և այժմ, գիշերային կամ նախալուսաբացային հարձակումը համարվում էր բազմաբարդ գործողություն։ Հայոց զորքի ձեռքբերած փայլուն հաղթանակը վկայում է, մասնավորապես, Վարդան Մամիկոնյանի ու նրա շտաբի կողմից այդ գործողությունը մանրազնին նախապատրաստելու, մինչև հարձակման պահն անհրաժեշտ գաղտնապահությունն ապահովելու, զորքերը ճիշտ տեղաբաշխելու և հմտորեն կառավարելու մասին։

Պատերազմի ամենասկզբում մեկ այլ խիստ ուշագրավ գործողություն էլ իրականացրեց Արցախում տեղակայված հայոց այրուձին, որն իր սեփական նախաձեռնությամբ, չսպասելով Հայոց սպարապետի հրամանին, հեծելազորային խորը մարտարշավ կատարեց Փայտակարանի միջով դեպի Ատրպատական (իսկ հրամանը նրանց չէր տրվել, ըստ երևույթին, անվտանգության նկատառումներից ելնելով՝ ժամանակից շուտ ապստամբության նախապատրաստումը չբացահայտելու մտավախությամբ)։ Այս կանխարգելիչ հարվածը վկայում է այն մասին, որ 3-4-րդ դարերում մշակված ու հայ-պարսկական բազմաթիվ պատերազմներում բազմիցս գործարկված մարտական գործողությունների համակարգը 449 թվականին տակավին չէր մոռացվել։ Այդ համարձակ զորաշարժն իրականացրած հայկական այրուձիի մեծ մասն, ամենայն

հավանականությամբ, բաղկացած էր ոստանիկական զորամասերից, այսինքն՝ նախկին թագավորական քառասուն հազարանոց բանակի (մասամբ արցախյան Տիգրանակերտում տեղաբաշխված) հեծյալ կազմավորումներից, որոնք գտնվում էին հայոց սպարապետի անմիջական ենթակայության տակ։

Եվ, իհարկե, հայ-պարսկական այդ պատերազմում առանձնահատուկ տեղ է գրավում 450 թ. գարնանը Խաղխաղ քաղաքի մոտակայքում տեղի ունեցած առաջին գլխավոր ճակատամարտը, որում հայերը, Վարդան Մամիկոնյանի հրամանատարությամբ, փայլուն հաղթանակ տարան։

— Ինչպիսի՞ ընթացք է ունեցել Խաղխաղի ճակատամարտը։

— Ներկայացնեմ շատ համառոտ։ 450 թ. սկզբին Աղվանքում պարսիկները կուտակում էին խոշոր ուժեր՝ արևելքից Հայաստան ներխուժելու նպատակով։ Այնտեղ արդեն իսկ հավաքվել էր շուրջ 40 հազար զորք՝ Սեբուխտ Նիխորականի գլխավորությամբ։ Հայոց հրամանատարությունը որոշում է կանխարգելիչ հարված հասցնել պարսիկներին, ազատագրել Աղվանքը, ընդլայնել Հայոց բանակի վերահսկողության տակ գտնվող գոտին, ստեղծել տարածաշրջանային կոալիցիա ընդդեմ պարսիկների՝ կցելով աղվանական և վրացական առկա ուժերը, ինչպես նաև գրավել ներկայիս Դերբենդի շրջակայքում գտնվող Ճորա պահակի հզոր ամրությունները և այնտեղից անմիջական կապ հաստատել ու հակապարսկական դաշինք կնքել հզոր «հոների» հետ։ Այդ կանխարգելիչ հարվածը պետք է հասցնեին նորաստեղծ երեք հայկական բանակներից երկուսը՝ Վարդան Մամիկոնյանի 2-րդ բանակը՝ հյուսիս-արևմուտքից, և Վասակ Սյունու 3-րդ բանակը՝ հարավ-արևմուտքից (1-ին հայկական բանակը, Ներշապուհ Արծրունու գլխավորությամբ, ուղարկվել էր հսկելու հայ-պարսկական սահմանի ամենավտանգավոր՝ հարավ-արևելյան հատվածը)։ Վասակ Սյունին չի կատարում նախապես մշակված ու համաձայնեցված այդ ծրագրով իրեն վերապահված ռազմական առաջադրանքը, փոխարենը մատնչորեն հաղորդում է պարսիկներին Վարդան Մամիկոնյանի գլխավորած շուրջ 20,000-անոց հեծյալ բանակի դեպի Աղվանք սրընթաց արշավելու երթուղին և ժամանակացույցը։

Ժամանակին ստանալով այդ գաղտնի տեղեկությունները՝ Սեբուխտը հասցնում է իր մոտ 40,000-անոց զորքով կտրել Հայոց բանակի ճանապարհը՝ Խաղխաղ քաղաքի մոտ գտնվող դաշտում դասական սկզբունքներով կառուցելով իր բանակի մարտակարգերը։ 2-րդ հայկական բանակը, անսպասելիորեն հայտնվելով թվապես մոտ երկու անգամ գերազանցող պարսկական զորքի մարտական կուռ դասավորության առջև, առաջին պահին հանկարծակիի է գալիս։ Սակայն Վարդան Մամիկոնյանը, արագորեն կողմնորոշվելով, ընդունում է ստեղծված իրավիճակում հնարավոր լավագույն որոշումը։ Նա կիսում է իր բանակը երկու մասի՝ ձախ թևում կենտրոնացնելով իր զորքի երեք չորրորդ մասը՝ մոտ 15 հազար հեծյալ և այդպիսով ստեղծելով թվային գերակշռություն մեկ և միակ ուղղությամբ՝ պարսից աջ թևի նկատմամբ, որը բաղկացած էր շուրջ 10 հազար ռազմիկից։ Սա ճակատամարտի ամենաուշագրավ, կանխորոշիչ պահն է։ Հակառակորդի մարտակարգերի անմիջական մերձակայքում արագ անցկացված այս բարդ վերադասավորումն ի զորու էին իրականացնել միայն ամբողջովին պատրաստված ու միմյանց հետ լավ համագործակցող զորամասներն ու ստորաբաժանումները։ Այդ հարվածային բռունցքով Վարդան սպարապետն այնուհետև անհապաղ՝ փաստորեն, ընթացքից հարձակվում է պարսից աջ թևի վրա, ջախջախում և շպրտում այն պարսից ձախ թևի վրա՝ արդյունքում կազմալուծելով թշնամու մարտակարգերը ճակատի ողջ երկայնքով։ Պարսից զորքերը մատնվում են կատարյալ շփոթության։ Խափանվում է նաև նրանց կառավարումը, քանի որ Վարդանի զորագնդերը հայտնվում են պարսից գլխավոր ուժերի ու թիկունքում պահեստային զորագնդի հետ միասին գտնվող Սեբուխտ զորավարի միջև։ Հաղթական վերջակետն այս ճակատամարտում դնում է Արշավիր Կամսարականի 5,000-անոց զորախումբը, որը Վարդան Մամիկոնյանը թողել էր

ճակատի կենտրոնական հատվածում՝ որպես կաշկանդիչ ուժ ու միաժամանակ իր միակ ռեզերվ։ Արշավիրը ճիշտ ժամանակին հուժկու հարված է հասցնում շփոթության մատնված պարսից կենտրոնին ու միանում Վարդանի զորամիավորմանը։ Արդյունքում՝ պարսից զորքերի զգալի մասը շրջապատվում է ու ենթարկվում ջարդի Լոպնաս (Աղստև) գետի մոտ։

Վարդան Մամիկոնյանն իր ժամանակի լավագույն զորահրամանատարներից էր։ Նրա զորավարական տաղանդի մասին համբավը թևածում էր և՛ Հայաստանում, և՛ Հայաստանից դուրս՝ Սասանյան ու բյուզանդական արքունիքներում, ինչպես նաև հոների միջավայրում։ Առհասարակ, մեծ զորապետերը նույնչափ հազվադեպ են ծնվում, որչափ մեծ գիտնականները կամ մեծ երգահանները։ Մեր միջնադարյան մատենագիրները՝ Մեսրոպ Վայոցձորեցին ու Վարդան Արևելցին պահպանել են ռազմի դաշտում նրա տարած հաղթանակների թիվը՝ 42 հաղթանակ։ Պատկերացնելու համար, թե սա ինչպիսի տպավորիչ քանակ է, նշեմ, որ համաշխարհային ռազմական պատմության մեջ ամենաառաջին հանճարներից մեկը համարվող Նապոլեոն Բոնապարտը տվել է, ընդհանուր առմամբ, 60 ճակատամարտ՝ 49-ում հաղթելով, 8-ում պարտվելով, 3-ը՝ ոչ-ոքի ավարտելով։ Եթե հաշվենք միայն 449-451 թթ. Հայոց սպարապետի ընդհանուր ղեկավարությամբ իրականացված ռազմական գործողությունների քանակը, ներառյալ վերոհիշյալ 16 ամրոցների գրավումը, ապա կունենանք մոտ 25-30 հաղթանակ։ Մնացած մեկուկես տասնյակ հաղթանակները ձեռք են բերվել ավելի վաղ, հիմնականում՝ 441-449 թթ. Սասանյանների տերության արևելյան սահմաններում քուշանների դեմ մղված երկարատև պատերազմում, որին մասնակցում էր նաև հայոց այրուձին՝ Վարդան սպարապետի գլխավորությամբ։

— Այդպիսի զորավարական փորձով ու կարողություններով Վարդան Մամիկոնյանին չհաջողվեց Ավարայրի ճակատամարտում տանել նույնպիսի վճռական հաղթանակ, ինչպիսին Խաղխաղում։ Այնուամենայնիվ՝ ինչո՞ւ։

— Պետք է հասկանալ, որ ամենատաղանդավոր զորավարներն էլ միշտ չէ, որ վճռական հաղթանակներ են արձանագրում իրենց երկարամյա ռազմական կարիերաների ընթացքում, որովհետև պատերազմներում ամեն ինչ չէ, որ մեկ մարդուց է կախված։ Հաննիբալը, Տիգրան Մեծը, Բելիսարիոսը, Նապոլեոն Բոնապարտը, Կոնստանտին Ժուկովը, Էրիխ ֆոն Մանշտայնը բոլորն էլ ունեցել են ոչ հաղթական ելքով ճակատամարտեր և նույնիսկ խոշոր պարտություններ։ Պատահել է նաև, որ մեծ զորավարները գերի են ընկել, ինչպես, օրինակ, Ֆրիդրիխ Պաուլյուսը, կամ զոհվել են, ինչպես Անրի Տյուրենը, Հորացիո Նելսոնը, Նիկոլայ Վատուտինն ու Իվան Չերնյախովսկին (այս թվարկումը կարելի է երկար շարունակել)։ Նույն ինքը Վարդան Մամիկոնյանը, դեռևս մինչև Ավարայրի ճակատամարտը՝ հայոց բանակի դաշտային ճամբարում զորքերի առջև ելույթ ունենալիս, իսկական ռազմիկին հատուկ անկեղծությամբ ու համեստությամբ այդ մասին արատահայտվում էր ավելի քան պարզ. «Մասնակցել եմ ես բազում ճակատամարտերի, և դուք էլ ինձ հետ. տեղ կար՝ մենք թշնամիներին արիաբար հաղթեցինք, տեղ էլ կար՝ նրանք մեզ հաղթեցին, սակայն շատ ավելի անգամ հաղթող ենք եղել և ոչ թե հաղթված»։

Ինչ վերաբերում է Ավարայրին, ապա Վարդան Մամիկոնյանի մեծ հաջողություն պետք է համարել արդեն այն, որ նա տանուլ չտվեց այդ բախտորոշ ճակատամարտը, որում պարսից ուժերը ոչ միայն մոտ երկու անգամ գերազանցում էին 66,000-անոց Հայոց բանակը, այլև, բացի հետևակից ու հեծելազորից, ունեին ևս մեկ ընտիր զորատեսակ՝ փղազոր։ Իսկ եթե թվարկելու լինենք այն հիմնական գործոնները, որոնք խանգարեցին Հայկական բանակին վճռական հաղթանակ տանել Ավարայրում, ապա դրանք շատ էին։ Բացի արդեն հիշատակվածներից, այստեղ կնշեմ միայն Վասակ Սյունու դավաճանությունը, որի հետևանքով 450 թվականի սկզբին ստեղծված հայկական 3-րդ բանակը, փաստորեն, կազմալուծվեց, հայերը կորցրեցին արդեն իսկ

ազատագրված Աղվանքն ու Ճորա պահակը, Մարզպանական Հայաստանում բռնկվեց կարճատև քաղաքացիական պատերազմ և այլն, և այլն։

— Պարոն Այվազյան, այսօր մենք ունենք բանակ, որտեղ զինվորները հատուկ մարտական պատրաստություն են անցնում, ունենք ռազմական դպրոցներ ու ակադեմիաներ՝ հրամանատարական կրթություն ստանալու համար: Իսկ որտե՞ղ էին կրթություն ստանում հայ զինվորականները հնում:

— Ռազմական կրթությունը ստանում էին գլխավորապես զորքերում: Ռազմական արվեստ ուսուցանում էին և՛ թագավորական, և՛ նախարարական զորքերում՝ հրամանատարական գիտելիքները սերնդե սերունդ փոխանցելով: Յուրաքանչյուր նախարար իր պապից, իր հորից, տան մյուս ռազմիկներից ստացել էր ռազմարվեստի մասին լուրջ գիտելիքի պաշար: Չէ՞ որ նախարարները, նախ և առաջ, զինվորական էին, հրամանատար: Ես վստահ եմ, որ և՛ Հայոց արքայական բանակում, և՛ նախարարական խոշոր տներում եղել են նաև ռազմարվեստի մասին գրավոր նյութեր: Այն, որ դրանք մեզ չեն հասել, դեռ ոչինչ չի նշանակում: Հայոց մատենագրական ժառանգության մի ահռելի հատվածը ոչնչացվել է և մեզ չի հասել: Իմ վերջին աշխատության մեջ ցույց եմ տվել, որ, օրինակ, Եղիշեի երկում կան դրվագներ, որոնք գրեթե նույնական են բյուզանդական ռազմական տրակտատների որոշ հատվածներին: Սա նշանակում է, որ կամ այդ տրակտատները թարգմանված են եղել հայերեն կամ դրանցից օգտվել են լատիներեն և հունարեն բնագրերով, կամ էլ հենց հայերենով գոյություն է ունեցել ռազմատեսական ինքնուրույն գրականություն:

Ռազմարվեստին վերաբերող երկերը չէին կարող բազմաթիվ օրինակներով արտագրվել, որովհետև դրանք նախատեսված էին ռազմաքաղաքական վերնախավի շատ սահմանափակ թվով մարդկանց համար և նույնիսկ գաղտնի էին պահվում: Այդպես էր, օրինակ, հին Չինաստանում: Չինական ռազմարվեստի որոշ տրակտատներ մեզ են հասել ընդամենը մեկ օրինակով (ասենք, ինչպես և հայ մատենագրության հուշարձաններից շատերը, օրինակ, մեծարժեք «Զորանամակը» կամ թեկուզ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը»): Այսպես, հին չինական ռազմական մտքի գոհարներից մեկը՝ Սուն Բինի «Ռազմարվեստի մասին» երկը պատահաբար հայտնաբերվել է միայն 1972 թվականին՝ պեղումների ժամանակ: Մինչ այդ շատերը չէին էլ հավատում, որ Սուն Բինը գոյություն է ունեցել:

Այսպիսով, Հին Հայաստանում ռազմական կրթությունը ստացել են և՛ տեսական, և՛ գործնական ճանապարհով՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր:

— Ունեցե՞լ ենք մարտական արվեստներ:

— Իհարկե: Հին աշխարհում հայ ռազմիկները քաջ հայտնի էին՝ որպես հզոր, ճկուն, զենքին լավ տիրապետող այրեր: Արդեն հիշատակված Տագինայի ճակատամարտի սկզբում օստ-գոթերի առաջնորդ Տոտիլան առաջարկում է մենամարտ կազմակերպել իրենց ու հռոմեական բանակի ամենաուժեղ զինվորների միջև՝ առաջ ուղարկելով Կոկկաս անունով մի ածդահայի: Ի՞նչ եք կարծում՝ ո՞վ էր հռոմեական բանակի ամենաուժեղ ռազմիկը: Նարսեսի շտաբում եղած հրամանատարներից մի հայ՝ Անզալասը (հայերեն՝ Ընձուղ կամ Ընջուղ): Նա գեղեցիկ մի հնարքով՝ ձին վերջին պահին շրջելով, կողքից հարվածով սպանում է օստ-գոթերի հզորագույն մարտիկին:

Բարձր է եղել նաև մեր արքաների ու նախարարների անձնական մարտական պատրաստությունը: Պատահական չէ, որ նրանցից շատերը բացառիկ մարտական հմտություններ են ցուցաբերել: Օրինակ՝ Տրդատ Գ Մեծ արքան, Վարդան Մամիկոնյանը տիրապետել են թրով այնպիսի հզոր հատող մի հարվածի, որը հակառակորդին մեջտեղից կիսում էր՝ նրա հագած զրահներով հանդերձ: Եվ սա առասպելաբանություն չէ, այլ պատմական

եղելություն։ Ճիշտ այդպիսի հատող հարվածներ կատարելու շնորհիվ էին հոչակ ձեռք բերում նաև ճապոնացի սամուրայներից կամ ռուս կազակներից ընտրյալները։ Իսկ այդպիսի վարպետության հասնելու համար պահանջվում էր ոչ միայն ֆիզիկական ուժ, այլև մարտարվեստի հնամյա դպրոց։

— Այսօր բանակաշինության գործում կարո՞ղ ենք օգտագործել հայոց ռազմագիտական միտքը։

— Ես կարծում եմ՝ կարող ենք, եթե լավ, ակադեմիական մակարդակով ուսումնասիրենք մեր ռազմական պատմությունը՝ մի գործ, որը դեռ սկզբնական փուլում է։ Սիրողական ուսումնասիրությունների վրա հենվել չենք կարող։ Դեռ հատորներ պետք է գրվեն մեր ռազմական պատմության առանձին դրվագների մասին, դրանք դեռ պետք է մեկտեղվեն ու նաև թարգմանվեն օտար լեզուներով։ Մենք ապրում ենք 21-րդ դարում, բայց պատերազմի բնույթը շատ առումներով նույնն է մնացել։ Մեր հրամանատարների ընդհանուր գիտելիքը պետք է ներառի հայոց և համաշխարհային ռազմական պատմությունից բազմաթիվ դրվագներ՝ դրանց վերլուծությամբ հանդերձ։ Այդ պատմական օրինակները շատ կօգնեն նրանց և՛ ուսումնառության, և՛ հնարավոր մարտական գործողությունների ժամանակ։

Առհասարակ՝ ռազմական պատմությունը հենց այն հենքն է, որի վրա ժամանակակից լավագույն բանակներում դաստիարակում են իրենց սպաներին։ Ուսումնասիրվում են ոչ միայն նոր, այլև հին պատերազմները։ Եթե հրամանատար ես և մտքումդ պահած ունես մեկ օրինակ Վարդան Մամիկոնյանի վարած ճակատամարտից, երկրորդը՝ Հուլիոս Կեսարից, երրորդը՝ Նապոլեոնից, և բազմաթիվ ուրիշ օրինակներ, անհրաժեշտ պահին կգտնես ճիշտ որոշումը ավելի արագ, քան եթե անցյալի փորձին անհաղորդ ես։ Համենայն դեպս, բոլոր մեծ զորավարները շատ են գնահատել ռազմական պատմությունն ու տեսությունը։

-Եթե ամփոփենք հայ ռազմական միտքը, ի՞նչ ձևակերպումներ կտաք։

-Դժվար է ասել, բայց պետք է արձանագրենք, որ հայկական ռազմական միտքն առնվազն Ք.ա. 2-րդ հազարամյակից ընդհուպ մինչև 13-14-րդ դար չի կտրվել, այլ ընդհակառակը՝ հետևողականորեն զարգացել է, բարեփոխվել՝ ժամանակի պահանջներին համընթաց (այդ են վկայում նաև հին Հայոց բանակի պարբերական խոշոր բարեփոխումները)։ Սկսած 15-րդ դարից, երբ հայկական խոշոր զորագնդեր ասպարեզում այլևս չկային, հայ ռազմական միտքը ևս մասամբ կտրվեց։ Ասում եմ՝ մասամբ, որովհետև Հայաստանի որոշ շրջաններում պահպանվել էին ազգային զորաջոկատներ։ Հայկական զորամասեր կային նաև իրանական և վրացական զորքերում, որոշ հայեր ծառայել են նաև օսմանյան բանակում, էլ չասած՝ Ցարական Ռուսաստանի և Խորհրդային Միության բանակների մասին։

Թեև 14-15-րդ դարերից մինչև 20-րդ դարի սկիզբը հայ ռազմական միտքը թույլ էր զարգացած (1720-ական թթ. ազատագրական հուժկու շարժումը չհաշված), միևնույն է՝ հին դարաշրջանում և միջնադարում այն արդեն ստեղծել էր այնպիսի մեծ մշակութային, հոգևոր ու հոգեբանական պաշար, որ մինչև այսօր էլ հայի ազգային հոգեկերտվածքում ռազմական տարրը շատ մեծ տեղ է զբաղեցնում։ Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև հայերն անընդհատ պատերազմների մեջ են եղել։ Գոնե վերջին երկու հազարամյակներում այդ պատերազմները միշտ էլ արդար են եղել՝ կամ ազատագրական, կամ պաշտպանական ու ինքնապաշտպանական։ Մեր մշակույթն ամբողջովին ներծծված է հայոց ռազմական անցյալով։ Ո՞ր բնագավառը վերցնենք, որտեղ չկա ռազմական տարր։ Ունենք ռազմական մոտիվներով գրականություն, էպոս, ճարտարապետություն, պարեր, երգեր և նույնիսկ օպերաներ։ Ռազմական տարրը մշտառկա է մեր հոգեկանում։ Ռազմական մտքի ու ոգու ժառանգումը մեծ ուժ է տվել մեզ։ Այսօր էլ մենք զգում ենք այն ռազմական ազատատենչ շունչը, որը հայ ժողովուրդը պահպանել է իր մեջ հազարամյակներով։

Զրույցը վարեց Ա. ՆՈՅԵՄԻՆ